

ՔԱՏԱՆՈՐՆԵՐԻ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	
Տարեկան	12 Տր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 սյր.
Վեցամսեայ	1.50 »

ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ  
 Իսկուցման տոյր առաջին  
 երեսին համար 40 սանթիմ  
 Կ. իսկ վերջին երեսի հա-  
 մար 20 սանթիմ Կ. երեքեն  
 աւելի անգամներու համար  
 20 Օ10 գեղջ կըլլայ:

Պուշկարիոյ համար ձեռքի  
 ( 15 ՍԱՆԹԻՄ )

# ՇԱՐՋՈՒՄ

Kalémcarian  
 12, rue de Haristangasse W.  
 Vienne

Նամակ եւ դրամ դրկնի  
 ու քանակ հասցեի

Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.

Redaction du journal  
 «Charjourn»  
 Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չեմ տուիր

Արտասահմանի համար ձեռքի  
 ( 20 ՍԱՆԹԻՄ )

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներէն, որոնք  
 վճարած չեն, կը խնդրենք ան-  
 յայող զրկել բաժնեգրիները,  
 որովհետեւ առաջին վեցամսեան  
 կը լրանայ. Բաժանորդները պէտք  
 է հասկնան որ թերթը ստակով  
 կելլայ:

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԻ

Հոգաբարձութիւնս հարկ կը  
 համարի ծանուցանել թէ ինչպատ-  
 քաղաքիս Ազգ. երկսեռ վարժա-  
 րանաց 120 կտոր խնամով և նորը  
 ճաշակաւ պատրաստուած ձեռա-  
 ռապորտներ վիճակահանութեան  
 դրած է, վիճակահանութեան  
 մէջ մի տոմսի գին 1 ֆրանք ար-  
 ժողութեամբ:

Լիայոյս եմք որ արգոյ հայ հա-  
 սարակութիւնը բազմաթիւ աղ-  
 քատ և որը մանուկներու կրթու-  
 թեան գործը ապահովելու մեր  
 այս ձեռնարկը պիտի հաճի քա-  
 ջալերել, փութալով գնել վիճա-  
 կահանութեան այդ տոմսերէն:

Ի գիմաց Հոգաբարձութեան  
 Ազգ. երկսեռ վարժարանաց  
 (Կնիք)

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Անցեալ կիրակի ըստ ազգարա-  
 րութեան ընկերութեանս վար-  
 շութեան, կարելի չեղաւ ընդ-  
 հանուր ժողով գումարել բաժա-  
 նորդաց բացակայութենէն. առ  
 այս կը յայտարարենք որ յառա-  
 ջիկայ կիրակի, 16 յուլիս, ազ-  
 գային վարժարանի մէջ գումար-  
 ուած անդամները քանի լինին  
 մեծամասնութիւն համարելով  
 ընդհանուր ժողով պիտի գումար-  
 ուի:

(Կնիք) Վարչութիւն Ընթ.

### ՆԱՄԱԿԱՍՏՈՒՓ

Շապին-Գարահիսարի էնտիրէս  
 գիւղացի Յարութիւն Մօլլէնց  
 անձը Ռուսմանիա կը գտնուի ե-  
 ղեր, հասցէն ով որ գիտէ կը  
 խնդրուի որ իմացնէ խմբագրու-  
 թեանս:

### ՄԵԾԱՍՈՒԼԻԹԵԱՆ ԱԻՏԸ

Գուցէ ոչ մի ժողովրդի մէջ  
 մեծամոլութիւնը այնքան խոր  
 արմատներ չէ ձգել որչափ մեր  
 մէջ:

Մեծամոլ է գրեթէ ամէն մի  
 հայ. որի փորում մ, Բի կտոր  
 կայ. նա ամեն բան գիտէ. իր  
 խելքով եթէ իսկապէս շատ զար-  
 քացածներէն և գիտական կըր-  
 թութիւն ստաչողներէն բարձր  
 չէ, գոնէ իրեն անպատճառ հա-  
 ւասար է ուզում հոչակել այդ  
 տեսակներին, առանց մտաբե-  
 րելու որ մտաւորապէս զար-  
 քանալու և գիտական գաստիա-  
 րակութիւն ձեռք բերելու հա-  
 մար՝ հարկաւոր է անընդհատ  
 և երկար տարիների աշխատու-  
 թիւն, մտքի բազմակողմանի մշա-  
 կում, ոչ միայն ուսումնարանի  
 մէջ, այլև կեանքի:

Այդ ահռելի մեծամոլութեան  
 ցաւը գրեթէ տղէտ և կիսա-  
 կիրթ հայ անհատին ստիպում է  
 միշտ կեղծել, մտաւոր գողու-  
 թեամբ զբաղվել, իր չը գիտցած  
 ու չըբռնած, իր մտաւոր կարո-  
 ղութիւնից շատ և շատ բարձր  
 խնդիրների մէջ մտնել՝ որպէս զի  
 փայլի, զարմացնէ, ու իր ներ-  
 քին աշխարհը իրար խառնող մե-  
 ծամոլութեան «եռ» գոնէ մա-  
 սամբ հանգստացնէ:

Մտէք մեր հասարակութեան  
 բոլոր խաւերի մէջ, վերցրէք մեր  
 մամուլը և կը տեսնէք որ կեն-  
 սական ամենաբարդ խնդիրներ,  
 գիտական և գրական ամենալուրջ  
 հարցեր, ընկերական ամենա-  
 խճճուած երեւոյթներ քննադատ-  
 վում են ամենաանխնայ կերպով  
 այնպիսի մարդկանցից և այն-  
 պիսի վճռողական կերպով, որ  
 մարդ կամայ ակամայ ինքնիրեն  
 հարց է տալիս՝ արդեօ՞ք բոլո-  
 րովին աւելորդ չէ զարգացում և  
 գիտութիւն ձեռք բերելու հա-  
 մար երկար ու ձիգ տարիներ  
 տանջվել, գրքերի վրա անքուն  
 գիշերներ անցնել, ահագին դրամ  
 ծախսել, քանի որ միեւնոյնը կա-  
 րելի է ձեռք բերել սովորական,

շատ սովորական լրագիրներ և  
 վէպիկներ կարգալով:

Թերուս, բոլորովին տգէտ, մտա-  
 ւորապէս բթացած մեծամոլների  
 մի ահագին երամով շրջապատ-  
 ված են մեր բոլոր հասարակա-  
 կան հիմնարկութիւնները՝ դպրոց,  
 մամուլ և այլն. ու մեծ մասամբ  
 ղեկավարվում են այդպիսիներով:  
 Եւ այդ պատճառաւ էլ այդ հաս-  
 տատութիւնների մէջ իսկապէս  
 մշակված ու զարգացած միտքը  
 գոյութիւն չունի. այլ բթամտու-  
 թիւնը, մտաւոր կեղծիքը, սո-  
 փեստութիւնը և աչքակապու-  
 թիւնը:

ՎԱՐՊՈ

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 7 Յուլիս

Պօլսոյ բոլոր թրքական թեր-  
 թերն ալ այսօր Ձինացիներու  
 կողմը կը բռնեն. չիններու ամէն  
 մէկ յաջողութիւնը սրտի խորքե-  
 րէն ծափերով կողջունեն:

Աս ալ տեսակ մը համիլաւմու-  
 թիւն է, ընթերցող, Ձինական  
 ներկայ տիրող ցեղը Մօնթօլ է.  
 Ձինու մէջ խել մը մահմետական-  
 ներ կան... Ուրեմն՝ կեզրակա-  
 ցընեն՝ իսլամութեան երկարա-  
 կանջ փաստաբանները. Ձինը՝  
 խալիֆներու բարոյական հովա-  
 նաւորութեան տակն է:

Իտալական առած մը կըսէ «փո-  
 խէ անունը՝ առակը քու մասիդ  
 կը պատմէ», եւ ստուգիւ ալ ա-  
 տանկ է. «Մայրագոյն Արեւելքին  
 «ծայրը» կարէ՛ կը մնայ «Արե-  
 ւելք»՝ Երկու արեւելքներու ալ  
 հիւանդ մարդերը իրար նման են  
 և շնորհիւ «առողջ գազաննե-  
 րու» փոխադարձ անհամաձայնու-  
 թեամբն կը քաշկռտեն իրենց  
 գոյութիւնը:

Թուրքերը կուրախանան որ չի-  
 նացիները մասնաւոր յաջողու-  
 թիւններ կունենան. Եւրոպացի-  
 ներ կը խոզխոզեն:  
 Ես ալ կուրախանամ Եւրոպացի

տիպլոմաթ կոչուած առ հրէշնե-  
 րուն ջարդուելուն համար, թո՛ղ  
 քիչ մը զգան, թէ ինչ ըսել է  
 ջարդուիլ:

Միայն ես բան մըն ալ կզգամ,  
 որ չեմ կարծեր թէ մեր թուրք  
 կաղէթածի էֆէնտինները զգան...  
 Ես կզգամ, որ առ օրը կուգայ և  
 Թուրքիոյ համար, ու աւելի զար-  
 հուրելի կերպով քան Ձինու հա-  
 մար:

Տեղւոյս դեսպանական մարմինը  
 նոր «կէս խմբական» դիմում մը  
 ըրաւ Բ. Գրան—քրիստոնեակեր  
 էնիզ փաշան Հալէպի վալի նշա-  
 նակուելուն դէմ. հայկական ջար-  
 դերու միջոցին դեսպաններու  
 պահանջով առ գազանը Տիար-  
 պէքերի վալիութենէ հրաժարե-  
 ցուցուած էր:

Հալիւ էնիզի նշանակման լուրը  
 Հալէպ հասած, տեղւոյն բոլոր  
 հիւպատոսները միաբերան բողո-  
 քագիր մը դրկեցին իրենց դես-  
 պաններուն, որ «վիլայէթի քրիս-  
 տոնէից մէջ էնիզի նշանակուիլը  
 խիստ իրարանցում է պատճա-  
 ւեր. Եթէ կուզեն վիլայէթի ան-  
 գորրութիւնը ու խաղաղութիւնը՝  
 թող աշխատին արգիլել անոր  
 մեկնումը և բեկանել անոր նշա-  
 նակուիլը»:

Իսկոյն Անգլիական, Գաղղիա-  
 կան և Ռուսական դեսպանները  
 հոս դիմում ըրին և պահանջե-  
 ցին չուղարկել էնիզ իր նոր պաշ-  
 տօնատեղին: Ականջ կախող չե-  
 շաւ:

Էնիզ գնաց Հալէպ. Այժմ ալ  
 կը լսենք որ Հալէպի հիւպատո-  
 սական մարմինը որոշած է և ոչ  
 մէկ յարաբերութիւն ունենալ  
 էնիզի հետ...:

Աս Եւրոպացիներուն քաղաքա-  
 կանութիւնն է, իսկ ի՞նչ է Երև-  
 տըղի նպատակը: Աղէկ մը նայե-  
 ցէք. Պահրի՝ Ատանայի վալի.  
 էնիզ՝ Հալէպի... ըսել է Կիլի-  
 կիոյ ամէն գաւառներն ալ առ  
 երկու հրէշներու վարչութեան  
 տակ են, ըսել է ոճրագործ միտք  
 մը յղացած է Երևտըղ: Աւելի  
 պարզ ըսենք, ըսել է թէ Երև-

արդի մէջ արդէն կազմուած է այն «վերջնական» հարուածի ծրագիրը, որով Համիտ կուզէ բնաշինը ընել ամբողջ ազգ մը:

Ռուսական նոթան բառական կը զբաղեցնէ Բ. Գուրը:

Անոր մէջ բուռն է որ շուրջ «3,000 թրքահայ վաճառականներ» կան նովկասի մէջ, որոնց անցագրերը թիւրք հիւպատոսները «վիզէ» չեն ընել թուրքիա երթալու համար: Աս գրութիւնը վերջ մը պիտի ունենայ և 40,000 հայ գաղթականները իրենց տեղերին պիտի դառնան:

Իսոյց արդեօք այդ 3,000 վաճառականները կամ 40,000 գաղթականները ի՞նչ անցագրերով պիտի դառնան, ուսական թէ թրքական—ատ ըստած չէ նոթային մէջ:

Վարչական շրջանակները հոս կը կարծեն որ ատ ամէն գաղթականներուն ուսը տուեր է մէկ մէկ անցագիր և ամէնքն ալ ուսնապատակ են եղեր: Է՞, մէկէն ի մէկ 40,000 ուսնապատակ հայ պիտի ներս խուժէ թուրքիա... ԲԱԺ

ԶՈՒՆՆԵՐԻՒՄ, 5 Յուլիս

Հետզհետէ օխտը լուրեր կը հասնին մեզ Տիւրքիէն: Այդ հեռուոր խուլ անկիւնէն մեր եղբայրներնու հառաչն ու հեծեծանքը չը լսուիր, թշուառ է ժողովուրդը և շուարած. տուն չունի անիկա: Գծի աղետաբեր կտորածներէն Տիւրքիի արեւմտեան գիւղերը իրենց ստացուած քննրէն զրկուելէն, զատ տուներն ալ հրդեհ ուեցան. այժմ ժողովուրդը գովերու մէջ է և անոր անկողինը չոր խոտը ու խոնաւ գետինն է: Գործերը

դադրած են, ապրուստ չի կայ: Ի՞նչպէս ապրի գիւղացին, երբ եղներէ ու արօրէս զրկուած է. կոտորածներու ժամանակ մարդիկ հրով ու սրով կը մեռնէին, իսկ այժմ անօթութիւնն է որ սուրին պակասը կը լրացնէ:

Կառավարութիւնը այս ամէնը կը տեսնէ և գիտէ, բայց նորէն իր սուրբերը հաւաքելու ճամբէն չի շեղիր. ժողովուրդը պատառ մը հաց չունի ուտելու, ինչով կարող է սուրբ վճարել. սակայն առճիկ կառավարութեան արգարօրէնքն է ինչ որ կը գտնէ սուրբի փոխարէն կը վերցնէ, ի՞նչ փոյթ թէ հայը սովամահ կը լինի. առճիկին համար մէկ հայու կեանքը ճանճի չափ արժէք չունի: Անգութ վաշխառուն ալ ամեն պարագայի մէջ կառավարութեան գործիք է. բնաւ չի շեղիր իր դժոխային ճամբէն. անիկա կուրսխանայ ժողովուրդի թշուառութեան վրայ, որովհետեւ պիտի յաջողի մէկ շանի մնացած արտերն ալ աման գնելով ձեռք ձեռքէ: Այսպէս ժողովուրդը արիւնքամ կը լլայ երկու սուրին մէջտեղ. վաշխառուն արիւն ծծելով չգոհանար մինչև որ ոսկորին ծուծն ալ դուրս քաշէ:

Իբր թէ զինուորական սուրբի առանձնաշնորհում մը եղած է. բայց միւս կողմանէ ճանապարհաչինութեան համար երկրագործը պիտի թողու իր գաշտային աշխատութիւնը և երթայ ամբաներով կառավարութեան համար գործէ, եթէ ոչ գրամ պէտք չէ վճարէ: Երթալով ապրիլը աւելի կը դժուարանայ. այս տարի տասնորդական սուրբը 6 էն 1 պիտի աւնուի. արդէն հանածներն իրենց չըբաւեր, այս ալ մինոր անգութ օրէնք:

Ի՞նչ պիտի ընենք արտասահմանի մէջ ապրող սիրելի հայրենակիցներ, գէթ միջոց մը կը խոսհի՞նք մեր բազմաչարչար եղբայրներուն:

Այս լուրերը ստանալէս վերջ կը յիշեմ Լօնտոնի և Բարիդի խոհեմականներու ընթացքը. այդպազած պառակները սրունք իրենց գրչակներով կուզեն արատաւորել այն մարդիկը՝ որ իրենց կեանքը վտանգի են դրած և եղբոր փրկելու համար կաշխատին: Ըսէք, ինչքեմ. ո՞վ խոհեմականներ, միթէ Տիւրքիի մէջ ալ ուսաց սահմանէն հայ հրոսակախմբներ ներս կանցնին:

ՎՏԱԿ

ՎՆԱՍԵԼՈՒ ՄԻՋՈՑ

«Հայ Յեղափոխական Դաշնակցականները պիտի մատնենք թուրք կառավարութեան ի՞նչ հայրենիքի (°)» (Փրովփալինս Արփիարա կան մասնաճիւղ)

«Ես կը հաւատամ թէ մեր կուսակցութիւնը ոեւէ գործ չի պիտի կրնայ կատարել յեղափոխական տեսակետով. բայց ես անոր մէջ կը կենամ որովհետեւ ան հայ Յեղ. Դաշ. գէտ կը կուզէ և կուզէ տապալել (°)»:

Կ. Պ. Չիրճեան

Գօղոս

Ուստի հրատարակող Չիրճեան և թիւին մէջ, Պարոն Կ. Պ. Չիրճեան գրուելը պատէ պատ կը դարնէ Շարժումի խմբագրութեան ուղղուած մի բաց նամակով, որմով եւ կը ճգնի իր հին աւուրց գրութիւնը պարակել, ուստի վրան փոշի ցանել, զանազան վնասակար եւ անկարելի պահանջներ զնելով Շարժումի խմբագրութեան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՇՈՑ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՑՔԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՅՅՈՑ, ՈՒ ՅԵ ԱՓՈՒՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԻՄ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Բ.

Եւ անա այդ առթիւ այս վերջին տարին, ժողովրդեան դէպի ինքն ստածած հակակրօթեան պատճառաւ, վրէժ լուծելու դիտամբ իր թերթ—Արմենիաի սրահակները սկսու բանալ, «մէն—մէն», «Զաւէն» եւ շատ մը այս տեսակ կեղծ դիմակաւորներու լպիւրը ու փողոցային գրութեանց առջեւ սանձարձակ կերպով հարուածելու ամբողջ հայ ժողովուրդը, ամէն տեսակ աղտոտ անկաններ անոր ճակատին փակցնելով. բայց կուզենք վերահասու լինել թէ՛ որո՞նք են Հնչակ եւ Դաշնակցական կուսակցութիւններ ըստածներն, ի՞նչ ցեղի կամ ի՞նչ ազգի կը պատկանին: Ասանց վարանման պէտք է ընդունել

թէ ատոնք կը պատկանին հայ ժողովրդին. կամ անոր ինքնստանալ մեծագոյն մասին, ուրեմն ելնել առանց անհալու «էնիչէրի» գաւառան բարոյապէս ինկածներ, մարդկային հրէշներ, աւաղակներ եւ խաչազողներ» այսպիսի անպատկառ անձանկներով անուանարկել, անկեղծ քննադատի մը գործ չէ, եւ մանաւանդ ժողովուրդին բարոյականութիւնն առաջնորդող մամուլը մը նոյնօրինակ անպատկառ գրութիւններն իր խմբագրութեանց մօտիկցնել. իսկ ուրիշ բան չէ, եթէ ոչ անոնց հաւատարիլ: Այդ է մամուլը մը աւագ պարտականութիւնը առ ազգն եւ առ հայրենիք. նա մանաւանդ այնպիսի մամուլ մը, որ ինքզինքը 1886 թուականներէն սկսեալ իր թերթի ուղղութեամբ, յեղափոխութեան քարոզողն ու կարապետն ցոյց տուած էր, ցարդ եւս կը նկրտի ցոյց տալ:

Միթէ՞ այդ կուսակցութեանց վերաբերող անգամոց ամբողջն ալ «գողեր, աւաղակներ, էնիչէրիներ, դաւաճաններ եւ մարդկային հրէշներ» էին. երբէք անկեղծ գործիչ մը իսկ չարտադրեցաւ ատոնցմէ: Ուրեմն ինչե՞ք եւ ովքե՞ք էին, ինչքե՞ններ, Մկրտիչներ, Լեւոններ, Մարգարներ, Յակոբներ, Արապոններ,

Տամատներ, Մուրատներ, Շմաւոններ, Գեորգիներ, Տանէլներ, Մինատեաններ, Ժիրայրներ, Պետոսներ, Բարկեւներ եւն. եւայլն. եթէ ոչ այդ երկու կուսակցութեանց հետեւողներ ու գործիչներ, եւ զեռ ինչեր կան, ողջ եւ անվնաս որ հայրենիքի ծոցին մէջ գործելով կը գործեն. կրկին ի շահս այդ երկու կուսակցութեանց, երբէք մահէ կախազանէ չը վախնուող, եւ ոչ թէ արտասահմանի մէջ Արմենիայի թերթակիցներու նման, ազատ երկրի մը մէջ իսկ, կեղծ դիմակ երեսնին առնելով, այս եւ այն ախտուել ջանալով՝ «պղտոր ջուրի մէջ ձուկ որսալով» նպատակով:

Այսպիսի ստոր եւ ամենացած ձեւերով անցնիլ հրապարակ այս եւ այն կուսակցութիւնը արտոտելու, պատուազգածի մը գործ չէ: Կը սիրենք եւ կը յարգենք մենք այն լրջօրէն քննադատող անկողնակալներն, որ իրենց իսկական անուամբ եւ մականուամբ գուրս կուզան, եւ երբ կը տեսնեն ո՞ր եւ է կուսակցութեան մը սխալ քայլ առնուլն, կամ թէ այն կուսակցութեան պատկանող մէկ երկու անհատներու ձեռք վ գեղձում մը գործուին, կամ գործելու նպատակ ունենալն կը նախատեսեն, կուսակ-

րութեան կամ անոր թղթակցին առջեւ:

Ի՞նչ տարօրինակ խելքի եւ մտքի տէր մարդիկ կան եղբր աշխարհի մէջ, որ կուզեն խնդրի մը իսկութիւնը, ճշմարտութիւնը, ծածկանուն կրողի իսկական անունն մէջէն դուրս հանել, փոխանակ քաջութիւն ունենալու, հերքելու կամ բացատրութիւն տալու այն խնդրի մասին ինչ որ կուզուի հակառակ կողմէն:

Հիմա մեր Պարոն Չիրճեան չնայելով որ իրականութիւնը արդարաւրէն փոխանակ հերքելու իմ բաժնեքս. ինչ որ գրած եմ Շարժումի 228 թիւին մէջ, երբ կուզէ գիտնալ թէ՛ ատ գրողը ո՞վ է. եւ կը պահանջէ որ, յեղափոխական կազմակերպութեան մը պատկանելովս հանգիստ իսկակոս անունովս երեւան գամ՝ («գաղտնի գործենք») առաջին պայմանն չէ՞... որովհետեւ «երկրագնդիս էն ազատ մասին վրայ կը գտնուինք» եղեր, Շատ ճիշդ է եթէ ես Չիրճեանի պէս փորխ եւ գրպանիս համար յեղափոխական եղած լինելի վախնալու բնաւ պատճառ մը չի ունենար, սակայն խնդրի հոն է որ ես յեղափոխական եմ Հայաստանի հաւատ, եւ ո՞չ մի երկիր ինձի ազատութիւն չիտար իմ իսկական անունովս երեւան գալու, որովհետեւ

Ա. Ես թուրքահպատակ մրն եմ, ուր եւ կը գտնուի իմ ընտանիքս. այսպիսի սխալ քայլ մը պատճառ կը դառնայ իմ մօտիկներուս հանգստութիւնը խանգարելու, եւ նոյն իսկ գոյութիւններն վտանգի ենթարկելու: Վասն զի ես Պարոն Չիրճեանի պէս պոչաւոր աստղի ներքեւ ծնած չըլլալուս այն բացառիկ շնորհք չեմ կրնար վախելի, ինչ որ Պ. Չիրճեան հրապարակի վրայ իրբեւ «յեղափոխական» եւ խմբագիր ճանչցուելով հանդերձ իր ընտանիքը հանգիստ պարելէ զատ (նոյն իսկ կտորածի ժամանակ) ազգեցիկ թուրք պաշտօնեայի մը պաշտպանութիւնն ալ կը վախել. «որուն սհրաշալի գաղտնիքը», Ուստի ն երբեմն Պօղոս հեղափոխութիւնը ընող «հասարակ մահկանացու» միայն գիտէ...)

Բ. Այս երկրի մէջ ըլլալով պան-

ցութեան ուշադրութիւնը այդ կէտին դարձուցնելու. կամ թէ իր սխալ տեսած քայլն իրեն ցոյց տալու կը ջանան, որպէս զի երկրորդն եւս գիտակցարար կամ անգիտակ. ամար չը կրկնուին, ցաւալի հետեւանքներ դուրս բերելով. եւ ոչ թէ ինչեւ ամբողջ կուսակցութիւններն ամենապատակաւոր կար ածել, իր չար կիրքն ու իր գարշելի եւր առաջ տանելու համար եւ մինչև ցարդ եղած ամբողջ ձախող հանգամանքներու պատասխանատուն ճանչնալով զանոնք, ի՞նչ ըրին երկու կուսակցութիւնները, եւ ինչո՞ւ պատասխանատու պիտի ճանչցուին. 1878 թուականներէն սկսեալ այդ ծրագիրը մշակուած էր. — հայը ջնջելու կամ գաղթել տալու, եւ կամ թէ իր մէջ ձուլու. — այսօր ամբողջ Հայաստանի գաւառները նոյնք կը վկայեն իրենց կենդանի օրինակներով Ատոր հանգէպ ի՞նչ աւարկութիւններ կրնա՞ք դուրս բերել, այդ անուրանալի ճշմարտութիւնը կեղծելով. ձախող հանգամանքներու ամբողջ չարքն կուսակցութեանց վերադրելու համար

Յիշեալ ամենակարեւոր կէտն լուսաբանելու համար կը հարկադրուինք մեր տեսութեան սահմանէն դուրս

դուրս մը, վաղ կամ ուշ ստիպուած եմ երկիր գառնալ: (Եթէ ոչ այնպէս փոխութեանն)

Գ. Բացարձակապէս չեմ վստահիր Ձիթճեանի ներկայանալ իբրև Դաշնակցական մը, վասն զի՝ յ. իրենց կուսակցութիւնը նպատակ եւ գործելու եղանակ ընտրած է դաշնակցականները տաճիկ կառավարութեան մասնել: Զ. եւ Պ. Ձիթճեան հանելով այդ դաւաճան գործունէութիւնը, լոկ առ պատճառով մտածէ լրակաւ— յեղափոխականի կուսակցութեան մէջ 3. այդ դաւաճան գործունէութիւնը Ձիթճեան ինք ցոյց տուաւ արդէն վերջերս, երբ իր համարաւոր զօրինչներու շտեմարան զօրինով հրատարակեց Ռուսաստանի եւ Պարսկաստանի նման բարբարոս երկիրներու մէջ ապրող դաշնակցականներուն առնչուելու: ուստի եւ կրնայ նոյն սեւ. եւ դաւաճան կիրքը գործադրել իմ նկատմամբ...

Ահա այս վատ եւ ցած պատճառներն են որ թոյլ չեն տար զիս «համարձակ երես առ երես ելնելու»: ոչ թէ Ձիթճեան բարբի ցանցառ մօրութեն ամչնալու վախէս, եւ առ ընկողմ «մուկի մէջէն գնդակ արձակող վատ մը» չեմ ըլլար. այլ պարզապէս գողերու զիմակը վար առնող, եւ առ վատերու կրքին գոհ երթալէ զգուշացող մը: Բայց ինչ օգուտ կապասէ Գ. Պ. Զ. իմ ով ըլլալս գիտնալէն. ինչու թուն խնդրոյն վրայ չի խօսիր, ինչու չի հերքեր փաստերով թէ՛ դրամը իր ճեղղ հասցուցած է. չէ՛ որ ամենամեծ փաստը ձեռքը ունեցած կըլլար եթէ դրամը իր նպատակին գործածէր. ո՞վ չգիտեր որ այս տեսակ դրամական խնդիրներու ժամանակ ստաղազի կը արուի, կամ գոնէ «չնորհակալութեան» գիր մը նամակ մը...: Ս. Եւրէ, ինչու երեւան չի հաներ եթէ ունի. չէ՛ որ անպատճառ ունեցած ըլլալու է եթէ զրկած է...: Այո՛ թերեւս ունի բայց անով գողութիւնը երեւան կելնէ ուրկէ երբ իմացուի թէ՛ ի՞նչ չնչին բան զրկած է: Այդ է պատճառ որ միւր կը զողայ խեղճին երբ ամեն անգամ այս հարցը կը ծագի, որ կախ կը կենայ

տօլանտըրճի գլխուն Դէմոկրէտի սուրին պէս:

Խոօի քարտուղար տօլանտըրճի խմբագիրը (°) բերանը փոխելով մի քիչ վար ճանապարհ յոխորտանքով մը կը հարցունէ «ինչո՞ւ արդեօք ձեր թղթակիցը իր ամբաստանութիւնները հոն (Հայրենիք թերթի մէջ ըսել կուզէ...) չպարզեր. կամ ինչո՞ւ այդ թերթը ինք այդ խնդիրները ձեռք չառնէր. ինչ սոսկալի, ահռելի գարհուրելի մարդ մը ըլլալու եմ որ ոչ անհաս մը, ոչ մարմին մը կրնայ համարձակիլ իմ առջեւ կանգնելու եւ զիս ամբաստանելու»: Առաջի հարցը այնքան անմիտ եւ յիմարական է որ զատմամ խոօի մը փեշերուն տակ մանողէն միայն կապասուէր. եւ սրուն չարժեր իսկ պատասխանել: Ի՞նչ ապուշի հարց է «ինչո՞ւ Հայրենիքի մէջ չեմ գրեր եւ Եւրոպայի մէջ կը գրեմ» եղբ. որովհետեւ Եւրոպայի թղթակիցն եմ. հասկցա՞ր... մեծք ճանապարհ. պարզէ թէ «ինչո՞ւ»: Իսկ միւս հարցերուն լիովին պատասխանած ըլլալու համար, կը հրաւիրեմ ընթերցողը որ Հայրենիքի թերթը աչքէ անցունէ գիտնալու համար թէ՛ քանի քանի անգամ խայտառակուած, եւ տաք ջուրի մէջ ընկնող ճանապարհի պէս թոյնները թող տուած է այս Արփիարի թոռնիկը. բայց որպէս զի ամփոփ գաղափար մը տուած ըլլամ, հոս մէջ կը բերեմ միայն երկու խնդիր որմէ կարելի կըլլայ գիտնալ թէ՛ Հայրենիքի «սոսկալի ահռելի գարհուրելի» ճանապարհներէ վախցող է թէ ո՛չ:

Գրեթէ 9—10 ամիս առաջ Պարոն Կառնէ—Չիտարեան հաւատարիմ իր կողումին կոկորդն անցուցած էր, ի նպատակ Զէյթունի սովետաց արուած ներկայացման դրամը. Հայրենիքի նախ առանց անունը տալու սպառնացաւ որ գողցած դրամը բերէ ետ գնէ. ինչպէս կըսեն «գող սիրտը գող Պ. Կառնէ—Չիտարեան պահանջեց որ ըսածնին պարզեն եւ վաւերացնեն, Հայրենիքի նախորդ խմբագիր Պարոն Թ. Զ. երկար յորտածով մը պարզեց ըրտը զեղծումները, մարդիկ ցոյց տուաւ որոնց տուած դրամական

նուէրները Պ. Կառնէ—չիտարեան իբրև ծախուած տոմսակի դրամ հաշուած էր. եւ տոմսակներու դրամն ալ զըրկած էր գողն ստամոքսին. այս խայտառակ ստորութիւնը հաստատեց Պ. Զ. Էկինեան ինչպէս եւ ուրիշներ, ի՞նչ ըրաւ Գարեգին. հերքեց. «ահռելի ու զարհուրելի» ըլլալը ցոյց տուաւ. երբէ՛ք... այլ վրան առաւ ու պտոկաւ: Աս մէկ: Ահաւասիկ երկրորդը որ վերջերս տեղի ունեցաւ:

Զօրինի խմբագիրը Պօղոսի մէջ, քանի մը անձերու ներկայութեան յայտարարած էր թէ—ինք չի ճանչնար Ա. Արփիարեանը նկարագրի տէր յեղափոխական. այլ լոկ գրագէտ մը. — այս բանը Պ. Ե. Հայրենիքի մէջ գրեց. խմբագիր տօլանտըրճին փորձեց ուրանալ. Հայրենիքի թղթակիցը իր բաժը հաստատելու համար վկաններու անունները եւ հասցէները հրատարակեց. առաջնորդքանի պաշտօնեայն նորէն պնդեց ամուր կայնիլ իր սուտին վրան. բայց Պ. Ա. այս անգամ օձիքէն ամուր բռնեց, գործնական քայլ մը—ընկերական դատաստան մը պահանջելով.— ահաւասիկ այդ կտորի վերջի մասը:

«Ահ հիմա Ռուստրի մարդու ուղեղին մէջ «յոռեչրջում» մը տեղի ունեցած: Ձիթճեան «յոռեչրջում» մը գոհ կերթայ, ոչ, բնաւ, ազգովին պահանջելու ենք որ յոռեչրջող պատժուի, ու ճիշդ այդ նպատակաւ կառավարելով որ Պ. Ձիթճեան ընկերական դատաստանի մը ներկայանայ հետեւեալ պայմաններու տակ:

Ա. Եթէ ըսածներս սպացուցանեմ Ձիթճեան պարտաւոր ըլլայ Ամբիկայի հայ թերթերու մէջ իր ստորագրութեան տակ ընդունիլ թէ գրածներս ճիշդ են:

Բ. Եթէ չի կրնամ հաստատել ես պարտաւոր ըլլամ, 1. Ամբիկայի հայ թերթերու մէջ խօսքս ետ առնել, 2. վճարել Ձիթճեանի ճանապարհածախսը եւ այդ առթիւ ըրած ծախսերը, 3. իբրև տուգանք վճարել 10 տոլար որբերուն:

Նկատելով թէ ինքզինք պատուոյ ատենանի ջերմ պաշտպան (°) կը հրուշակէ, կը յուսամ թէ այս գործնական քայլէն խոյս չը պիտի տայ»: Հայրենիք թիւ 57):

Ի՞նչ ըրաւ առ տօլանտըրճի ճանապարհ. քաջութիւն ունեցա՞ւ, աչքերը դեռ չի բացած կատուի ձագի չափ անգամ ձայն հանելու. — երբէ՛ք: Եւ այս բարոյական արտաւորը դեռ չամչնար ստելու թէ—ոչ ոք կը համարձակի երես առ երես իրեն բան մը ըսելու:

Կը վերջացնեմ ըսելիքս եզրակացունելով թէ—Ա. ով ըլլալուս պէտք չունի Պ. Ձիթճեան, թո՛ղ չի պահանջէ որ ես ինքս զիս մատնեմ. Բ. ըսածներուս հերքում եւ բացատրութիւն կը պահանջեմ. թող ճուկ չի տայ այս ու այն կողմ. այդ պահանջը իր «հակառակորդ» զիստելու միակ միջոց է որ կուզէ գործածել...: Առ այժմ այսքան:

Հ. ՀԱՅԿՈՒՆԻ Փրօվիտէս, 25 Յուլիս

Գ. Գ. — Վիճարանութեան նիւթ եղող գրութեանս մէջ միայն մէկ սխալ սպրդած էր, առ ալ այն է որ Զուէն զիմակը Մարտիի խանութպանի փալատին մէջ—Վայրենի խոզստորագրող սրիկայ մը Ասքանազին կը պատկանի. ինչ որ ես Չորթանեանի էի վերագրած...:

Նոյն

ՕՏԱՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅ ՏՂԱՆԵՐԸ

Ազգային և թէ այլ վարժարաններու անկարգ ընթացքը պատճառ կը դառնայ բուական թուով հայ տղաքներուն օտար վարժարաններ յաճախելուն. սկսած իրենց փոքրիկ 9—10 տարու ժամանակէն: Աստուր կերթան կորսուելու օտար վարժարաններու մէջ, և սպագային ձուլուելու օտարին հետ: Մենք չենք կրնար մեղադրել այդ տղայոց ծնողքը, որովհետեւ նոքա տեսնելով իրենց փոքրիկներու ժամանակի սպաննումը հայ վարժարաններու մէջ, կատարուին զա-

կելնել, կառավարութեան հայաջինջ ընթացքի եւ դէպքերու մասին բազմաթիւ մը ընկելու համար, անոնց մանրամասն ապացոյցներով, ցոյց տալու. հայ ժողովրդի մէջ, կուսակցութեանց սխալ քայլերէն առաջ կէտնալու որ Եւրոպայի թերթերու մէջ, ինչ ոչ տաճիկ կառավարութիւնը շատոնց ի վեր նպատակ ունէր ջնջելու հայ տարրն եւ յարմար առթիւն կապասէր. կամ թէ այդ յարմար առթիւ կուսակցութիւնները ստեղծեցին. թէ ոչ քաղաքականութիւնը ստեղծեց:

1882—83 թուականներուն, դեռ եւս ու է կուսակցութիւն մը գոյութիւն չունեցած, նշանաւոր դէպք մը պատահեցաւ Մշոյ աշխարհի մէջ. եւ այդ պատճառաւ Մուշն իր գաւառներով սուրէ պիտի անցունէին երբէք հայ մը իսկ չը թողու պայմանաւ: Երբեք ի՞նչ էր պատճառն. միթէ՞ կրկին կուսակցական ցոյցեր տեղի տուին տաճիկ պազան տարրին ջնջելու հայ տարրն. թէ ոչ իր նախապէս պատրաստուած ծրագիրներն ի գուրի պիտի հանէր. հայը եւ հայ կական ճնշող հարցը ջնջելով, Սոյն կնճառտ խնդիրն յստակ կերպով լուսարանելու համար, կը ստիպուինք իր էութեամբ մէջ իբրև 1882—83ի դէպքն:

Պուլանրի գաւառի Ապրի գիւղի շէյխերը, մաս մը գող եւ մարդասպան ջիւրտերը գլուխին հաւաքած գիշեր մը Մուշախէն գիւղի ըջիս Սեւոյի տան վրայ յարձակելով տունը աւարի տալէ յետոյ, իր 17—18 տարեկան Սեւոյ անուանեալ գեղանի աղջիկն եւս թոնի առնելով կը հեռանան: Աղջիկն հայրը՝ Սեւոն, երեւելի գերդաստանէ մը՝ եւ դատն պաշտպանելու չափ կարող մէկն ըլլալով բնականաբար այսպիսի ծանր անպատեհութեան մը անդէպ չէր կրնար լռել. ուստի՝ Պիթիսի եւ Մշոյ հայոցս առաջնորդարաններու միջոցաւ սկսաւ Պատրիարքարանն ըրտըր: Պատրիարքարանն՝ այդ գաղափարութեանց դէմ ազգու ձեւով մը բողոքեց Բ. Դրան. Բ. Դուռը՝ այդ բողոքը ի նկատի առնելով, խոսիւ հրամայեց Մշոյ եւ Պիթիսի կառավարութեանց միջոցներ ձեռք առնուլ եւ աղջիկը քիւրտ շէյխերուն ձեռքէն առնելով կառավարութեան ազդեցութեան ներքեւ անցունել, ուրտ օրինի հարցաքննութիւն կատարել: Կառավարութիւնը Բ. Դուշն ստացած հրահանգի համաձայն, ալայ մը գօրք եւ նոյնչափ ալ ոստիկանք Սատըղ ազայի առաջնորդութեամբ՝ Ապրի գիւղ կուղեւորեն. անդ հաս-

նելով, թըքական աղուէսային խորամանկութեամբ շէյխերը խաբելով, աղջիկը ձեռքերուն կառնեն եւ մէկէն ճանապարհ կիշնան: Այդ անակնկալ խաբուութիւնը շէյխերու գաղափարութիւնը գողոնց ատոր հանդէպ շէյխերն եւս սկսան ոտքի ելնել. իրենց սօֆտաներով մէկտեղ, քիւրտ տարրն եւս իրենց հետ ոտքի կանգնեցնելով՝ ոտից ցզլուխ զինուած, խուճեր կազմած սկսան Մուշ լեցուիլ եւ բռնի աղջիկն պահանջել. հակառակ պարագային՝ ամբողջ հայերուս սուրէ անցունել սպառնալով՝ երթալով քրտական խուճանի թիւն Մշոյ մէջ կատուարանար ու հազարը կանցնէր. այդ վստայաւոր քայլը Մշոյ հայոցս անաջնորդաբան տեսնելով, առանց վարանման Պատրիարքարան հեռագրեց, եւ Մշոյ դաշտն անխուսափելի անդունդի մը առջեւ գանուիլը մատնանիչ ըրաւ Պատրիարքարանը ատոր հանդէպ կրկին ազգու բողոքագրով մը Բ. Դրան գիմեց, եւ այդ խնդրոյ կարգադրումը պահանջեց, իսկ Բ. Դուռը՝ այդ քայլը տեսն համարելով, հեռագրաւ մը խոսիւ արգելեց, որով տեղական կառավարութիւնը միջոցներ ձեռք առնելով՝ ոստիկանաց եւ զօրաց միջոցաւ քիւրտ խուճանը ցըր-

ուեց, որոյ առթիւ քիւրտերն եւս գրգռուելով Սատըղ աղային պարնելով վերաւորեցին, իսկ աղջիկն իր հօրը յանձնուեցաւ:

Ահա խնդիր մը՝ որ երկու երեք ամիսներ կը քաջքուէր կառավարութեան թիւրքութեամբ հայերը սուրէ անցունելու կամ մահմէտականացնելու համար. իսկ ինքն լոկ ու միջիկ հեռուէն կը դիտէր, ձայն մը իսկ չը հանելով: Երբ երթալով սուր կերպարանք ստացաւ ինքզին, յայնժամ անպատեհ հետեւանքն եւ ապագայ պատասխանատուութիւնը ծանր եւ վտանգաւոր տեսնելով, հարկ զրուեցաւ կարճ ու կտրուկ միջոցներու գիմել. եւ առանց պղտիկ ընդդիմութեան մը իսկ կարգադրել խնդիրն, ալ աւելի յարմարագոյն ժամանակի թողով, ճնշման եւ մահմէտականացման հարցն:

ՄԱԿԱՐ ԳՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ

(Եւրոպայիցի)

նոնք գոնէ օտարի ձեռքով կըրթել:

Շատ դիւրին է երեւակայել թէ ի՞նչ կզգայ իր ազգին, եղբայրներուն համար այն հայ երիտասարդը որ իր կրթութիւնը օտարէն առած է. նա, որչափ լինի զգայուն և բանիբուն, միշտ կը յարի դէպի անոնց, որոնցմով շրջապատուած էր երկար տարիներ գարոցական շրջաններուն մէջ. անոնց վարքու բարքին սովորած և անոնց լեզուին մէջ գտած իրեն ամէն ներքութիւն և համ որպէս մայրենի լեզուին:

Աչքի առաջ ունինք պուլկարիոյ մէջ այնպիսի երիտասարդներ եւ օրիօրոյներ որոնք ոչ թէ իրենց ազգային ինքնորոյնութեան վրայ գաղափար կազմելու կարողութիւն չունին, հասկանալի կընար իրենց մայրենի լեզուով երկու բառ իրարու քով բերելով արտայայտել իրենց գաղափարը. անոնց համար լաւ է այն որ օտար է. անոնք մը ծուռ աչքով կը նային իրենց ազգին վրայ, որու անուամբ կոչուին անպատուութիւն կը համարեն. այն գործը որ օրարինն է կը յարգեն, իսկ իրենց ազգին համար թէ գործի մը նպատակու հրաւիրուին, կը ծիծաղին կասկածելով որ այն ալ կարող է այդպիսի բաներու ձեռնարկել:

Անցնինք Ռուսիան. առաջ պիտի ելնեն կարգ մը Բեթըներ Նիքոլաներ, որոնք իրենց անունները փոխած են այն պատճառով միայն, որ ուրիշներ չիմանան թէ իրենք հայեր են. ատոնց քով այնքան շնչին է ազգայնութեան գաղափարը, որ աւելի լաւ է քեզի համար բարեկամութեան մէջ մտնել ուսմանի մը հետ քան թէ հայի. որովհետեւ քու հայ ընկերդ օտարի մը առաջ եթէ գիտէ ալ բնաւ չպիտի զիջանի քեզի հետ հայերէն խօսիլ, թէ դու չիհասկնաս ալ իր լեզուն. Այս կըսեմ ես փորձաւորաբար որովհետեւ ունէի այնպիսի բարեկամներ որոնք ընկերական շրջանակի մէջ իմ ներկայութեանս ուսմաներէն կը խօսէին միշտ. իրենց մայրենի լեզուն բաւական գիտնալով հանդերձ:

Պարզ է որ ատոնց պատճառը մեր անհոգութիւնն է մեր վարժարաններու մատակարարման գործին մէջ:

Թող չի կարծուի սակայն թէ մենք հակառակ ենք սկզբունքով մեր տղաները օտար վարժարաններ զրկել, ո՛չ. այլ կուզենք որ մեր ազգային եւ այլ վարժարանները ունենան այնպիսի ծրագիր մը որ հայ մանուկները հոն ստանան իրենց մայրենի լեզուի ուսումը և այլ առարկաներ 4 կարգերու շրջանի մէջ կանոնաւոր և երբ դուրս ելնեն անկից կարենան, եթէ փափագին, իրենց 13—14

տարեկան հասակնուն մէջ մտնել Պուլկարական կիմնադրոններու Բ. Գ. դասարանները: Բայց ցաւօք կը տեսնենք որ վերոյիշեալ պահանջներէն եւ ոչ մէկը կարող են լրացնել, ոչ մեր ընդհանուր Ազգ. վարժարանները և ոչ ալ մասնաւոր վարժարանները, չնայած որ շատեր իրենք իրենց համար գովասանքներ կը կարգան:

Կրթական գործերու ուժը կը ներկայացնէ երիտասարդութիւնը, և այդ ալ իր անտարբերութեան վերջին ծայրն հասած է. մենք կընտրենք հոգաբարձուներ և յետ կը քաշուինք այլ եւս, կարծելով թէ երկինքէն կարողութիւն պիտի տրուի անոնց որ պիտի կառավարեն վարժարաններու ընթացքը կանոնաւոր:

Երբէք չենք հետաքրքրուիր մեր վարժարաններով, և պատեհ ժամանակին անմիջապէս կը կրկնենք, օ՛ֆ, մեր վարժարաններէն մարդ չեկնիր. կը նախատենք, այս ինչ հոգաբարձուն թէ անուս է ևն ևն: Բայց տեսնենք եթէ մենք արամադրութիւն ունենանք մեր վարժարաններուն օգնելու, չենք կրնար երթալ մտնել անոնց մէջ, հետաքրքրուիլ անոնցմով և մեր կարծիքները յայտնել:

Ուրեմն մենք ամենէն առաջ պէտք է մեր նիւթական և թէ բարոյական ա՛լակցութիւնը չի խնայենք մեր փոքրիկներուն կրթութեան գործին, որովհետեւ անոնք միայն պիտի ըլլան ապագայ սերունդի ներկայացուցիչները, և ազգային ինքնորոյն կրթութեամբ պիտի կարող ըլլան ձուլման հանդէպ դիմադրել:

ՄՈՒՐԱՍ-ՍՈՒՐԱՍ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԹԱՓՐ

Օր մը երբ դասերովս զբաղած կաշխատէի՝ հայրս որ մօտս նշուած էր, յանկարծ ըսաւ ինձ. «տղաս դու ալ օր մը զինուոր պիտի ըլլաս»: Այս քանի մը խօսքերը վրաս անմիջական տպաւորութիւն մը չըբրին և ես դասերէս իսկ չընդմիջուեցայ. Ասոր վրայ հայրս իր խօսքերը ազգու շեշտով մը կրկնեց, բայց ես պատասխան չիտուի նորէն:

Երբ երեկոյին օրուան զբաղումներս աւարտելէ վերջ, քիչ մը զբօսնելու համար՝ դաշտ գացի՝ հօրս ըսածները ինձ մտածման նիւթ դարձան: Նոտայ դաշտին լուիկ մենութեան մէջ, ուր սոխակին գեղգեղը և արտուտին դայլայլը միայն կը լսուին, և անձնատուր եղայ զիս ճնշող խուլումներուն:

Կըմտածէի թէ՛ ինչ սուրբ գործ էր իր հայրենիքին համար զինուոր դառնալ և ի վիճակի ըլլալ օր մը զայն պաշտպանելու: Մարդկութեան օրէնքներուն աւանդն նուիրագործուած հաս-

ուածներէն մին կը համարէի զայն: Պաշտպանել հայրենիքս, կուրի... ու մեռնիլ անոր համար, արիւնովս ողողել անոր սուրբ հողը, ատկէ աւելի երջանկութուն չէի կրնար երեւակայել: Դալար մաքթերուն վրայ նստած՝ հեշտ երազի մը առարկան դարցած էի, ինքզինքս յաւիտենական դրախտի մը մէջ կարծելով: Բա՛յց, յանկարծ զգատտացայ... Մտածեցի որ... հայրենիք չունէի...:

Ու դարձեալ խոր վիշտերովս համակուած թաղածալի մտածումներուս անդունդին մէջ գլորեցայ:

Ձինուոր պիտի ըլլա՞յի... պիտի կուրէի... պիտի մեռնէի... բայց... որո՞ւ համար: Օտարի՞ն համար. այդ անկարելի էր: Մէկ կողմ՝ ձգել իմ անտէր ու անօգնական Հայաստանս և օգնել օտարին... ի՞նչ սրբապղծութիւն: Նախանձոտ աչքով մը կը դիտէի, կը դիտէի Պուլկար զինուորները, այն վառվառն երիտասարդները որոնք իրենց քաղաքը, ընտանիքը, ու գործը ձգած եկեր են օր մը իրենց հայրենիքը պաշտպանել կարողանալու համար. ատոնց իւրաքանչիւրը իր ձեռքին մէջ ունէր ազատարար հրացան մը:

Հազար երանի կուտայի անոնց իցի՛ւ թէ ես ալ պուլկար ըլլայի ու իմ հայրենիքիս համար մեռնէի և ոչ թէ ստիպուած ըլլայի օտարին ծառայելու:

Այն իրիկունը տխուր արամադրութեան սակ տուն դարձայ ու հօրս ըսի. «հայրիկ, ես զինուոր չեմ ըլլար»: Այն օրէն իմ մէջս վառ կեցաւ յեղափոխական ոգին: Յեղափոխիլ բռնակալի մը դէմ, ի՞նչ անսահման նուիրագործում հայրենեաց: Այն օրէն իմ բերս սահման համոզումը ունէի. Պրկտիկ ըլլալ, բայց Ազատ ըլլալ. Երանի՛ այն հերոսներուն որոնք սիրեցին իրենց արիւնովը շողել իրենց հայրենիքը. երանի՛ անոնց, որոնք առաջիններուն բախտակից պիտի ըլլան...:

Այս է իմ մտածումս: (\*) ՆՈՐԱՄԻԼ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յուլիս 5ին Պելճիգայի հիւպատոսը Շանկայէն Պրիւքսէլ կը հեռագրէ թէ՛ չինական ազբւերներէ եկած լուրերու համաձայն Բէքիւնի օտարականները ապաստանած են իշխան Թօ Հինկի պալատին մէջ:

— Չինները կը ոմբակոծեն ուսական Պլակովէչէնսկ քաղաքը, այդ պատճառաւ կը կարծուի թէ Ռուսիա աւելի խիստ դիրք պիտի բռնէ դէպի Չինաստանը:

— Անգլիական թերթի մը Շանկայէն յուլիս 4ին կը հեռագրեն

(\*) Այս գրուածքը մի պատանի է գրել եւ մենք դիտմամբ բոլորովին չենք ուզած:

թէ ըստ Չինական պաշտօնական տեղեկութեան ժէնէրալ Նիհ սպաննուած է Թիէն Յինի քով եղած ճակատամարտին մէջ:

Շանթունգ գաւառի մէջ եղած օտարականներու բոլոր կալուածները աւերուած են:

— Պերլինի վալթ գործակալութեան Չիֆուէն կը հեռագրեն թէ՛ ամերիկեան թերթերու թղթակիցները կը հաղորդեն որ Բէքիւնի մէջ պաշարուած օտարականները ուլած են Յունիս, 23 25ին դուրս ելլալ, բայց ոմբակոծուեր են: Չինական կայսրը մեռած է և իշխան Թուան գահը յափշտակեր է. Իսկ ժէնէրալ Նիհ որ օտարականները կը պաշտպանէր ստիպուեր է անձնապաշտ ըլլալ:

Սամօսի կղզիին ազգային ժողովի 46 երեսփոխաններ Սուլթանին հեռագիր մը ուղղած են, որով կը մեղադրեն իշխան Վալանիւսը կղզիին կառավարիչը. Բ. Գրան, կեղծ տեղեկութիւններ տալուն համար, և Սուլթանէն կը խնդրեն ապահովել ազգային ժողովին գործունէութեան ընթացքը:

— Բեթերսպուրկէն կը հեռագրեն որ Չինաստանի սահմանակից Ռուսական նահանգները պատերազմական դրութեան մէջ գրուած են:

— Յուլիս 6ին Պելճիգայի հիւպատոսը Շանկայէն Պրիւքսէլ կը հեռագրէ թէ իշխան Չինկ իրեն յայտարարած է որ գեռ յուլիս 5ին Բէքիւնի օտարականները ողջ են եղեր. իսկ յուլիս 4ին կայսերական հրովարտակով մը հրամայուած է ապստամբութիւնը խեղդել:

— Անգլիական ազնուականներու երեսփոխանական ժողովին ներկայացուած է օրէնք մը, որով կառավարութեան իրաւունք կը տրուի արգիլել Չինաստան մտցնել պատերազմական մթերքներ:

— Յուլիս 7ին Չինաստանի Բարիկի գեսպանը Ֆրանսայի արտաքին գործոց նախարարին Չինաստանի կայսեր հեռագիրը յանձնած է, որով հասարակապետութեան նախագահ Լուպէէն Ֆրանսայի միջամտութիւնը կը խնդրուի: Ֆրանսայի նախարարը յայտնած է Չինաստանի գեսպանին թէ՛ Լուպէն իր պատասխանը Բէքիւնի գեսպանատան միջոցաւ պիտի յայտնէ...:

— Յուլիս 7ին Պոլսէն կը հեռագրեն թէ՛ նախարարական խորհուրդը որոշում մը տուած էր որուն համեմատ 29 օրուան մէջ թերթական բոլոր օտար երկիրներ փախած քաղաքական և զինուորական պաշտօնեաները պիտի վերադառնան Պոլիս. իսկ այդ որոշման չը հնազանդողները պիտի պատժուին: Նախարարական խորհուրդի այդ որոշումը հաստատուած է սուլթանական իրատէսով: